

2021

ԲԱԶՄԱՏՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐ

ՀՀ ք. Երևան Կենտրոն վարչական շրջան Պարոնյան փող.
15/5,15/7,15/9,15/10, Չորագյուղ թաղամասի թիվ 35 հասցե, 35 և 37
շենքեր

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**

**ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ՌԻԴ» ՍՊԸ**

Ա/Ձ Ա. Գալոյան
ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ՀՀ



ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐ
ՀՀ ք. Երևան Կենտրոն վարչական շրջան Պարոնյան փող. 15/5,15/7,15/9,15/10, Ձորապուղ
թաղամասի թիվ 35 հասցե, 35 և 37 շենքեր

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

«ՌԻԴ» ՍՊԸ տնօրեն՝

Ա. Մնացականյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	5
1.3	Հապավումներ	5
1.4	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնատեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	6
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր</i>	6
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր</i>	7
1.5.3	<i>Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ</i>	12
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ	16
2.1	Նախապատրաստական և հողային աշխատանքներ	17
2.2	Նախագծվող օբյեկտի կառուցման աշխատանքներ	17
2.3	Շինարարության ժամկետները	18
2.4	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը	19
2.5	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները	20
2.6	Նյութերի և բնարեսուրսների օգտագործում	20
2.7	Ժամանակավոր գույքային շինությունների պահանջարկի հաշվարկ	22
2.8	<i>Արտաքին ջրամատակարարման, ջրահեռացման եվ կոյուղու ցանց</i>	23
2.9	<i>Ներքին ջրամատակարարման, ջրահեռացման եվ կոյուղու ցանց</i>	24
2.10	<i>Ջեռուցում, հովացում եվ օդավոխություն</i>	25
2.11	<i>Էլ. մատակարարում</i>	26
2.12	<i>Գազամատակարարում</i>	26
2.13	<i>Կանաչապատման աշխատանքներ</i>	26
2.13.1	<i>Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ</i>	27
3.	ՆԱԽՍԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	28
3.1	Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	28
3.2	Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը	28
3.3	Կլիման	29
3.4	Օդային ավազան	34
3.5	Ջրային ռեսուրսներ	37
3.6	Հողերի նկարագիրը	38
3.7	Հողային ռեսուրսներ	38
3.8	Բուսական աշխարհ	39
3.9	Կենդանական աշխարհ	39
3.10	Թափոնների կառավարում	40
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	41
4.1	Ռիսկերի գնահատում	41
4.2	Արտանետումների աղբյուրները	41
4.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	41
4.3.1	<i>Մթնոլորտային օդ</i>	41
4.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	42
4.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	42
4.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	42
4.3.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ</i>	43
4.3.6	<i>Աղմուկ և թրթռում</i>	43
4.3.7	<i>Թափոնների կառավարում</i>	44

4.3.8 *Տարածքի բարեկարգում կանաչապատում*.....44

4.3.9 *Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը*.....45

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ45

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....46

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....49

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ52

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

- 1.1.1 Ձեռնարկող՝ «ՌԻԴ» ՍՊԸ
- 1.1.2 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ՀՀ ք. Երևան, 0010, Ձորագյուղ 35
- 1.1.3 Նախատեսվող գործունեության հասցեն՝ ՀՀ ք. Երևան Կենտրոն վարչական շրջան Պարոնյան փող. 15/5,15/7,15/9,15/10, 15/11 Ձորագյուղ թաղամասի 35, Ձորագյուղ թաղամաս 1-ին փողոց հ.37 հասցեներ
- 1.1.4 1.6 Հեռախոս՝ +37499994222

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ համալիր: Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Կենտրոն վարչական շրջան Պարոնյան փող. 15/5,15/7,15/9,15/10, 15/11 Ձորագյուղ թաղամասի 35, Ձորագյուղ թաղամաս 1-ին փողոց հ.37 հասցեներում:

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ,

օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Ներկա վիճակի նկարագիր

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Կենտրոն վարչական շրջան Պարոնյան փող. 15/5,15/7,15/9,15/10, 15/11 Ձորագյուղ թաղամասի 35, Ձորագյուղ թաղամաս 1-ին փողոց հ.37 հասցեներում:

Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենք-շինությունների հարևանությամբ: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Կառույցի հեռավորությունը հարակից շենք-շինություններից նախատեսվել է գործող նորմատիվային պահանջներին համաձայն:

Հողամասի մակերեսը կազմում է 5818.57քմ, այն ունի վառ արտահայտված ռելիեֆային անկում, որը կազմում է 21 մետր:

Հողամասում առկա են կիսաքանդ կառույցներ, որոնք ենթակա են ապամոնտաժման:

Պարոնյան փողոցի նիշից բարձր 21 հարկանի նախագծվող շենքից մինչև <<Ապրիկոտ>> հյուրանոց – 9.4 մ: 0.00 նիշից ցածր նախագծվող հատվածից, որի աջ կողային ճակատները խուլ են և գտնվում են հյուրանոցի հատակագծային նիշից մոտ 3.00 մ ցածր, մինչև հյուրանոց հեռավորությունը – 4 մ է:

Ներքևի հատվածում նախագծվող համալիրի աջակողմյան, 0.00 նիշից ցածր հատվածի հեռավորությունը հյուրանոցից կազմում է 15 մ:

21 հարկանի շենքի ձախ կողային ճակատից հեռավորությունը մինչև հյուսիս - արևմտյան հատվածում գտնվող << Ուրարտու>> ռեստորանի կիսանկուղային շինությունը կազմում է 6.7 մ:

Համալիրի 0.00 նիշից ցածր ձախակողմյան մասի, որի պատերը խուլ են, մինչև ռեստորանի կիսանկուղային շինությունը կազմում է 2.5 մ:

Հեռավորությունը 21 հարկանի շենքից մինչև << Ուրարտու>> ռեստորանի հիմնական կառույցը կազմում է 37700 մ, իսկ մինչև մոտակա 4 և 9 հարկանի բազմաբնակարան բնակելի շենքեր՝ համապատասխան 42 և 48.5 մ :

Բոլոր հեռավորությունները մոտակա շենքերից պատկերված են ստորև ներկայացվող քարտեզ-սխեմայում:

Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.581857 հա, բաղկացած է հետևյալ հողակտորներից՝ 0.01737հա (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0502-0057), 0.037673հա (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0502-0174), 0.153568 (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0502-0191), 0.25851հա (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0502-0172), 0.067068հա (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0502-0140), 0.014462հա (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0502-0142), 0.03321հա (կադաստրային ծածկագիր՝ 01-006-0502-0141):

- հողատարածքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն

Տեղ-տեղ հանդիպող հողային ծածկույթի վրա, որտեղ բուսահողի հզորությունը 20 սմ է, տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (E. repens), Սեզ սանրանմանը (E. cristatum), Սեզ մազակիրը (E. trichophora), Սեզ միջինը (E. intermedia), Սեզ երկարավունը (E. elongatum): Ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է մոտ 280մ³:

1.4.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Քանդման աշխատանքներ

Հողամասը ազատ է կառուցապատումից, առկա են կիսաքանդ կառույցներ, որոնք ենթակա են ապամոնտաժման:

Գոյություն ունեցող շինությունների քանդման շինարարական ծավալն ըստ երկրաբաշխական հանույթի կազմում է 2218,5+457,5+234=2910 մ³, որի 30 % -ն ընդունվում է որպես շինարարական աղբ, այսինքն շինարարական թափոնների ծավալը կլինի 873 մ³ կամ մոտավոր 1500 տ:

Շինությունների քանդումն իրականացվելու է CAT 320 մակնիշի էքսկավատորով, որն օժտված է տարբեր նշանակության ծայրային գործիքներով, այդ թվում հիդրավլիկ սեպով:

Քանդման ընթացքում շինարարական աղբը բարձվում է ինքնաթափերի վրա և տեղափոխվում նախօրոք Երևանի քաղաքապետարանի կողմից սահմանված վայր:

Մինչև քանդման աշխատանքների մեկնարկն անհարժեշտ է իրականացնել շենքերի կրկնակի հետազննություն՝ կրողունակությունը կորցրած կամ փլուզման վտանգ

ներկայացնող կառուցվածքների հայտնաբերմամբ, հաշվառմամբ և համապատասխան ակտի ձևակերպմամբ:

Բազմաֆունկցիոնալ համալիր

Կենտրոն վարչական շրջանում, Պարոնյան փող. 15/5,15/7,15/9,15/10, Պարոնյան փող. 15/11 հողամաս, Չորագյուղ թաղամաս 35, Չորագյուղ թաղամաս 1-ին փողոց թիվ 37 հողամաս հասցեներում բազմաֆունկցիոնալ համալիրի նախագծման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետարանին կից քաղաքաշինական խորհրդի 04.07.2019 թ.կայացած նիստի հ.2 արձանագրությունը, պատվիրատուի առաջադրանքը, Երևանի քաղաքապետարանի կողմից 22.06.2021 թ.01/18-07/2-50387-537 տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Բազմաֆունկցիոնալ համալիրի նախագծային փաստաթղթերի պատրաստման համար որպես ելակետային տվյալներ և պայմաններ հանդիսացել են՝

- Երկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները;
- Հողատարածքի գեոդեզիական չափագրությունները, որոնց հիման վրա ճշտվել են հողամասի սահմանները;
- Ինժեներական գծերին և հաղորդակցողիներին միանալու վերաբերյալ տեխնիկական պայմանները;

Հաշվի են առնվել հետևյալ նորմատիվ փաստաթղթերի պահանջները՝

1. Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015թ. N 596 Ն որոշումը (հավելված հ.2)
2. ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր»
3. ՀՀՇՆ IV-11.03-03-02 (ՄՄՆ 2.02-05-2000) «Ավտոկայանատեղեր»
4. ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»
5. ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) ««Շենքերի շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար»

Համալիրի բնութագիրը

Նախագծով նախատեսված է բազմաֆունկցիոնալ շենքի կառուցում բարդ ռելիեֆի պայմաններում, ինչի հետևանքով կառույցը ունի բարդ կոնֆիգուրացիա: Համալիրը բաղկացած է երկու մասից:

Համաձայն գործող նորմերի շենքի կոնստրուկտիվ համակարգի իրականացումը նախատեսում է երկու հատվածների միջև սեյսմիկ կարան:

Շենքի կոնֆիգուրացիան համապատասխանում է 22.06.2021 թ.01/18-07/2-50387-537 ճարտարապետահատակագծային առաջադրանքին:

Հողի բաժարձակ նիշը Պարոնյան փողոցի կողմից կազմում է 992.5 մ:

Կառույցի հատակագծային նիշը կազմում է 992.5 մ:

Պարոնյան փողոցի կողմից կառույցը ունի 21 վերգետնյա հարկ:

Դեպի Հրազդանի կիրճ նայող հատվածում նախագծված է վեց հարկանի կառույց, որի - 1 – ից մինչև -5 հակերում նախատեսված են հարկաբաժիններ /апартаменты/, իսկ -6 հարկում նախատեսված են հասարակական նշանակության տարածքներ: Նշված կառույցի առջևի մասում՝ նախագծվող ճանապարհի տակ նախատեսված են տեխնիկական տաճածքներ, ենթակայանի, կաթսայատան և ջրի պոմպակայան տեղադրման համար:

Շենքի վերին նիշը ընդունված է տանիքի պարապետի վերին նիշը և կազմում է 70.0 մ, ինչը 70 մ բարձր է Պարոնյան փողոցի բաժարձակ նիշից, համաձայն ՃՀԱ – ի 9.3 ենթակետի:

Տանիքում նախագծված են աստիճանավանդակների և վերելակների տեղադրման, դեպի տանիք անվտանգ դուրս գալու համար, ինչպես նաև վերելակների տեխնոլոգիական սարքավորումների տեղադրման համար ծավալներ, որոնց բարձրությունը գերազանցում է 70.00 մ, ինչը թույլատրվում է ՃՀԸ – ի նույն ենթակետով:

Տիպարային հարկի բարձրությունը 2-ից մինչև 21 հարկ կազմում է 3,30մ / հատակից հատակ/: Առաջին հարկի բարձրությունը կազմում է 3.45 մ: Առաջին հարկում տեղավորված են մուտքային գոտին, նախասրահը, վերելակների նախամուտք և 2 հարկաբաժին /апартаменты/: Նշված բնակարանները բարձր են և կա լայն հնարավորություններ նրանց ներքին ձևավորման համար ժամանակակից դիզայնի և իրականացնելու համար:

Դեպի կիրճ նայող 6 հարկանի կառույցի ճակատների լուծումները համահունչ են Ձորագյուղ ազգագրական թաղամասի կերպարին համահունչ:

Նշված կառույցին կից, դեպի Պարոնյան նայող հատվածում նախագծված են ստորգետնյա 5 հարկանի ավտոկայանատեղիներ:

Դեպի տանիք դուրս եկող աստիճանավանդակների և վերելակների հորերի ծավալները համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի գերազանցում են սահմանված նիշը:

0.00 նիշից ցածր նախագծված հատվածի ճակատների երեսապատման համար նախատեսված է օգտագործել բարձրորակ տուֆե և բազալտե սալեր:

Դեպի ավտոկայանատեղի մուտքը նախատեսված է Ձորագյուղ փողոցին կից գոյություն ունեցող ճանապարհից: Նախատեսված են նաև բացօթյա ավտոկայանատեղիներ Պարոնյան փողոցին կից՝ շենքի մուտքի առջև, ինչպես նաև տարածքի ստորին նիշի վրա՝ նախագծվող ճանապարհին կից: Նախագծվող ճանապարհը նախատեսված է միացնել գոյություն ունեցող գրունտային ճանապարհին, որը ենթակա է վերակառուցման և ընդլայնման: 21 հարկանի շենքի տանիքը հարթ է, ներքին ջճահեռացմամբ: Հողամասին կից՝ Պարոնյան փողոցի երկայնքով անցնում են ջրատար և կոյուղագիծ, ինչպես նաև հեղեղատար: Նշված արտաքին գծերին միանալու համար առկա են իրավասու կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմաններ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

1. Հողամասի մակերեսը - 5818.57 քմ
2. Կառուցապատման մակերեսը 0.00 – ից բարձր – 765.7 մ²
3. Կառուցապատման մակերեսը 0.00 – ից ցածր – 3383.5 մ²
4. Բարեկարգման մակերեսը – 2021.4 մ², որից՝
ճանապարհներ և սալվածքներ – 1163 մ²
5. Կանաչապատում – 858.4 մ²
6. Շենքի հարկայնությունը - 27 հարկ (այդ թվում 21 հարկ 0.00 նիշից բարձր):
7. Բնակարանների քանակը – 80 բնակարան՝ 0.00 նիշից բարձր և երկու հարկաբաժին /апартаменты/::
8. Հարկաբաժինների /Апартаменты/ քանակը 0.00 նիշից ցածր - 25:
9. Շինարարության տևողությունը – 4 տարի

Նախագծում հաշվի են առնված ՀՀՇՆ21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» հետևյալ պահանջները՝

1. 21 հարկանի շենքում նախատեսված են երկու Չ1 տիպի չծխապատվող սանդղավանդակներ:

2. 21 հարկանի շենքում բնակարանների ամենահեռավոր ելքից դեպի սանդղավանդակ տանող միջանցքի առավելագույն հեռավորությունը չի գերազանցում 10 մ:
3. Համալիրի 0.00 նիշից ցածր նախագծված 6 հականի կառույցում, սեյսմիկ կարանով անջատված յուրաքանչյուր հատվածում նախատեսված են սանդղավանդակներ: Հարկաբաժիններից՝ /апартаменты/ ամենահեռավոր ելքից դեպի սանդղավանդակ չի գերազանցում 25 մ:
4. Ստորգետնյա ավտոկայանատեղիներում նախագծված են մեքենաների համար կայանման տեղեր և տեխնիկական սենյակներ:
5. Ստորգետնյա ավտոկայանատեղիներում հակահրդեհային փեղկերի լայնությունը նախատեսված է 1.2 մ:
6. Ստորգետնյա ավտոկայանատեղիներում փակուխային հատվածներից դեպի ամենահեռավոր տարահանման կետ հեռավորությունը չի գերազանցում 20 մ:
7. Կառույցի կենտրոնական հատվածում ստորգետնյա ավտոկայանատեղիներից նախատեսված են ելքեր յուրաքանչյուր հարկից: Որպես տարահանման ուղղիներ նախատեսված են աստիճանավանդակը և թեքահարթակները: Պարոնյան փողոցին հարող հատվածում ստորգետնյա կայանատեղիներից տարահանումը հարկերից նախատեսված է կազմակերպել լրացուցիչ աստիճանավանդակի միջոցով:

Բնակչության տեղաշարժման սահմանափակումներով խմբերի կենսագործնության պայմանների ապահովմանն ուղղված անհրաժեշտ լուծումներ

Դեպի շենքեր տանող ուղիներում և հարակից մայթերում նախատեսված են թեքահարթակներ: Հետիոտնային ուղիների ծածկույթի վրա նախատեսված են նախազգուշական ֆունկցիա կատարող շոշափողակյան (տակտիլ) միջոցներ: Մուտքը տարածք սարքավորված են շենքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով: Բաց անհատական ավտոկայանատեղերում, ինչպես նաև շենքու տեղակայված ավտոկայանատեղերում հաշմանդամների ավտոտրանսպորտի համար հատկացված է 10% տեղ: Արտաքին սանդուղքները և թեքահարթակները ունեն բռնաձողեր: Թիկնաթոռ-սայլակով հաշմանդամների համար նախատեսված վերելակի խցիկը կահավորված է բռնաձողիկով: Վերելակներից երկուսի խցիկները ունեն 2,4 մ լայնություն (ելնելով հատակագծային լուծումներից)՝ մարդուն պատգարակով տեղափոխելու հնարավորությունն ապահովելու համար:

Վերելակներից երկուսի դռների լայնությունը ապահովում է թիկնաթոռ-սայլակներից օգտվող հաշմանդամների անցնելու հնարավորությունը:

Ավտոկայանատեղերի, դեպի համալիր մուտքերի և ելքերի կազմակերպում

Դեպի բազմաֆունկցիոնալ համալիր հիմնական մոտեցումներն են՝ Պարոնյան փողոցի և Ձորագյուղ փողոցի կողմից:

Պարոնյան փողոցի կողմից նախատեսված է մեքենաների մուտք դեպի շենքի կենտրոնական մուտքի առջև գտնվող հարթակի ձախակողմյան և աջակողմյան հատվածներում նախագծված կայանատեղեր: Հնարավոր է 8-9 մեքենաների կայանում: Առնվազն մեկ տեղ նախատեսված է հաշմանդամների մեքենաների համար: Ձորագյուղ փողոցի կողմից՝ նրան հարող ճանապարհի վերին հատվածից նախատեսված է մուտք դեպի ստորգետնյա ավտոկայանատեղեր, ինչպես նաև, նշված ճանապարհի վերակառուցվող ներքևի հատվածով նախատեսված է մեքենաների մուտքը -6-

րդ հարկի առջևի հարթակ,որի վերջնամասում հնարավոր է կայանել 5-6 ավտոմեքենա: 21 հարկանի բնակելի շենքի կողային և հետևի ճակատներին կից՝ 0.00 նիշի վրա նախագծված են անցատեղիներ հրշեջ մեքենաների համար:

Ստորգետնյա կայանատեղեր

21 հարկանի բնակելի շենքի տակ նախագծով նախատեսված են 5 հարկանի ստորգետնյա ավտոկայանատեղեր:Յուրաքանչյուր հարկի բարձրությունը, բացառությամբ առաջին հարկի կազմում է 3.3 մ,բարձրությունը մինչև կախվող կոնստրուկցիաների ներքևի նիշը՝ 2.7 մ:Առաջին հարկի բարձրությունն է՝ 3.9 մ:Մուտքը նախագծված է Ձորագյուղ փողոցի կողմից՝ նրան հարող ճանապարհի վերին հատվածից ճուղավորվող թեքահարթակով: Թեքահարթակի թեքությունը կազմում է < 10%:

Ավտոկայանատեղի հրդեհաշիջումը նախատեսված է իրականացնել փոշեհատիկային մոդուլներով, որոնց կազմում առկա է ինքնաշխատ թողարկիչ, որը գործարկվում է մոդուլի տիրույթում 63 °C ջերմաստիճանից:

Ավտոկայանատեղերի ներսում ավտոմոբիլների շարժման ուղիները պետք է սարքավորվեն վարորդներին կողմնորոշող ցուցանակներով:


Մեքենաների կայանման համար հատկացված ընդհանուր թվի 10 % նախատեսված է հաշմանդամների համար՝ տարահանման համար նախատեսված ուղիներին առավելագույնս մոտ:


Ավտոհանգրվանները նախատեսվում են ջեռուցվող: Օդափոխության համակարգը սնվելով կաթսայատնից ավտոհանգրվաններում պետք է ապահովի 5 °C ջերմաստիճան: Սարքավորումները տեղակայվելու են -23,00 նիշում հատկացված օդափոխության սենյակում:

Անվտանգության պահանջներից ելնելով, շենքի միջանցքներում և ավտոհանգրվաններում նախատեսվում են ծխահեռացման համակարգեր, իսկ վերելակների հորաններում և նախամուտքերում (тамбур-шлюз) նախատեսվում են օդային դիմհարներ:

Նախագիծը կատարված է Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական,հակահրդեհային և սանիտարական նորմերին և կանոններին համաձայն:

1.4.3 Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ






Քարտեզ-սխեմա



Շինտեխնիկայի կայանման սխեմա



2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Որպես շինարարական դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:¹

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Կառավարությանը ենթակա Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով^a բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի» կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ» համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով^a գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության^a անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

¹ ՀՀԾՆ Ի-3.01.01-2008 §ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ: 16

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման « հրահանգման ժամանակին և որակով անցկացման» անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման « արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

2.1 Նախապատրաստական և հողային աշխատանքներ

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները.

- գոյություն ունեցող կոմունիկացիաների վերատեղադրում կամ հեռացում,
- մասնակի ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- երկրաբաշխական հիմնարար ցանցի կառուցում,
- մեխանիզմների համար հարթակների կարգավորում,
- վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում,
- բուսական շերտի հեռացում և պահեստավորում,
- գոյություն ունեցող շենքերի, շինությունների, կառուցվածքների քանդում:

Փոսորակի փորման համար նպատակահարմար է **CAT 320** էքսկավատորի կիրառումը, որի տեխնիկական բնութագրերը բերվում են ստորև: Էքսկավատորը օժտված է տարբեր նշանակության ծայրային գործիքներով, այդ թվում հիդրավլիկ սեպով:

Փոսորակի փորման համար նպատակահարմար է երկրորդ, օրինակ **CAT 318** էքսկավատորի կիրառումը:

Առաջարկելի է նաև Bobcat S530 էքսկավատոր-տեղադրիչի կիրառումը, մասնավորապես ստորին մակարդակում բնահողի մշակման համար, երբ անհրաժեշտ կլինի կռունկով իջեցնել և ամբարձել էքսկավատորը:

Որպես շարժական կոմպրեսոր (օդաձնշումային գործիքների սպասարկման համար) առաջարկվում է Comp Air C 76 մոդելը:

2.2 Նախագծվող օբյեկտի կառուցման աշխատանքներ

Միաձույլ երկաթբետոնե աշխատանքներն առաջարկվում է իրականացնել երկու կցովի կռունկներով և ոչ մեծ մեծության աշխատանքային գոտում՝ ավտոմոբիլային կռունկով:

QTZ 125 DH6015 մակնիշի կռունկը սլաքի 50 մ թռիչքով տեղադրվում է բետոնե բարձիկի վրա շինարարության տարածքում՝ հյուսիսային հենապատի մերձակայքում 3-5

առանցքների միջև (հնարավոր է տարածքից ոչ զգալի շեղում, ինչը պետք է համաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի և հսկող համապատասխան կազմակերպությունների հետ):

Միաձույլ աշխատանքների իրականացման առաջին փուլում (մինչև +8.4մ)

QTZ 125 DH6015 կոունկի բարձրությունն ընդունվում է ազատ կանգնած կոունկի բարձրության չափով (զծագիր ՇԿ-02): Այս փուլում զուգահեռ կիրառվում է Lieberr 150 EC-B8 (120 HC) FR tronik կոունկը 30 մ սլաքի թռիչքով, որի բարձրությունը մինչև սլաք ազատ կանգնած վիճակում կազմում է 45,8 մ: Այն տեղադրվում է Բ՝ -Դ առանցքների միջակայքում 6-րդ առանցքի ուղղությամբ:

Կոունկների հետագա համատեղ կիրառումը կարող է բերել վթարային իրավիճակի , ինչի պատճառով Lieberr 150 EC-B8 (120 HC) FR tronik կոունկը ապամոնտաժվում է (զծագիր ՇԿ-03):

Հետագա շինարարությունն իրականացվում է QTZ 125 DH6015 կոունկի միջոցով, որը + 45մ շենքի նիշին հասնելուց հետո ամրակցվում է շենքի կառուցվածքներին ըստ կոնստրուկտորական հաշվարկների և շահագործական հրահանգների:

ՀՀ Քաղաքական ավիացիայի վարչության համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցվող բարձրությունը կազմում է մոտ 90 մ (որոշակի պաշարով (զծագիր ՇԿ-04):

Հաշվի առնելով կցովի կոունկների մեծ արագաստայնությունը՝ ուժեղ քամու ժամանակ դրանց սլաքը հանվում է արգելակումից և ազատ պտտվում:

Կցովի կոունկների հիմնատակի ամրությունը հավաստագրել փորձագիտական եզրակացությամբ:

Lieberr 150 EC-B8 (120 HC) FR tronik կոունկն ապամոնտաժելուց հետո հիմնական QTZ 125 DH6015 կոունկին զուգահեռ կիրառվում է КС 55713-6 ГАЛИЧАНИН ավտոկոունկը:

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է КамАЗ—53229 АВС 7 ավտոբետոնախառնիչով՝ ավտոբետոնապոմպի կամ վերամբարձի միջոցով տեղադրման վայր հետագա տրմամբ: Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում, բացառելով շինհրապարակում բետոնահանգույցի տեղադրումը:

Մարդկանց շարժումը բետոնացված մակերևութների վրա և կաղապարամածի տեղադրումը թույլատրվում է բետոնի 1,5 ՄՊա ամրության ձեռքբերումից հետո:

Հիմքի, սյան կաղապարամածի քանդումը թույլատրվում է բետոնի նախագծային 70 % ամրություն ձեռք բերումից հետո, ծածկի համար՝ 80 % :

Ձմեռային պայմաններում երկաթբետոնե աշխատանքներն իրականացնելու ժամանակ առաջարկվում է կոնտակտային եղանակով (տաքացնող լարի միջոցով) բետոնի ջերմամշակումը: Առաջարկվում է ПНСВ-1,2 մակնիշի 1,2 մմ տրամագծով պոլիվինիլքլորիդային մեկուսացումով ցինկապատ պողպատե ջղով լարի կիրառումը:

Էլեկտրասնուցումն իրականացվում է ТСДЗ-63/0,38, ТСДЗ-80, СПБ-80, КТП ТО-80/86 կամ КТП-63/ОБ տիպի իջեցնող տրանսֆորմատորներով , որոնք օժտված են լարման իջեցման մի քանի աստիճաններով, ինչը թույլ է տալիս արտաքին օդի ջերմաստիճանի փոփոխման դեպքում կարգավորել ջերմային հզարությունը: Տաքացնող լարերով կարելի է ջերմամշակել միաձույլ կոնստրուկցիաները մինչև -300C պայմաններում: 1մ3 բետոնի տաքացման համար միջինում անհրաժեշտ է 60 մ ПНСВ-1,2 մակնիշի լար:

2.3 Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հիմնական աշխատանքների ծավալների, աշխատատարության հաշվարկման և տեխնոլոգիական հաջորդականության հաշվառման հիման վրա:

Օբյեկտի կառուցման ընդհանուր տևողությունը կազմում է **48 ամիս կամ 4 օրացուցային տարի**, որից 4 ամիսը նախատեսված է նախապատրաստական և քանդման աշխատանքների համար, 6 ամիսը՝ փոտրակի երկաթբետոնե ցանկապատման և հողային աշխատանքների իրականացման համար:

Միաձույլ երկաթբետոնե աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 1,5 հերթափոխ:

Բանվորների առավելագույն քանակը կազմել է **116 մարդ**, միջինը՝ **54 մարդ**: Բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը կազմում է 2,1:

Գումարային աշխատատարությունը կազմում է **77717 մարդ-ժամ**:

2.4 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կոունկ	QTZ 125 HS6015	1(2)
2	Ավտոմոբիլային կտունկ	LIEBHERR LTM 1100-4.2	1
3	Ավտոմոբիլային կտունկ	KC 55713-6, Галичанин	1
4	Էքսկավատոր	CAT 320	1
5	Էքսկավատոր	CAT 318	1
6	Էքսկավատոր-բեռնիչ	Bobcat S530	2
7	Գլղոն	CAT CS 563	1
8	Բուլդոզեր	CAT D6R	1
9	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	1
10	Ավտոբետոնապոմպ	Merc B. Acrtos 4144 D	1
11	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	2
12	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	4
13	Փոխարկիչ թրթռիչների համար	ИБ-4	4
14	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	2
15	Եռակցման տրանսֆորմատոր	ТД-500	8
16	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
17	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	3
18	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
19	Ավտոբետոնախառնիչ	Kamaz 58149 z	ըստ հաշվարկի

2.5 Հիմնական շինարարական աշխատանքների և ռետուրսների ծավալները

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 30000մ³

Հետլիցք՝ 10000մ³

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Երևան քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

2.6 Նյութերի և բնարեսուսների օգտագործում

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շին. հրապարակում նախատեսվում է տեղադրել կոնտեյնների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի սենյակ, հանդերձարան, պահակատնակ, բուֆետ, ինչպես նաև բիոզուգարաններ և փակ պահեստ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- Շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:

- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով,

- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել մեքենայացման բազայում:

Համալիրի շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Հիմնական աշխատանքների ծավալները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Հիմնական շինարարական աշխատանքների ծավալներ

NN	Աշխատանքների անվանումները	Չափման միավ.	Ծավալը
1	Փոսորակների իրականացում	մ ³	30000,0
2	Ե/բ հիմքերի նախապատրաստական շերտ	մ ³	500,0
3	Ե/բ հիմնային սալ	մ ³	3600,0
4	Ե/բ սյուներ	մ ³	1800,0
5	Ե/բ պարզունակներ	մ ³	3200,0
6	Ե/բ ծածկեր, հատակներ	մ ³	6125,0

7	Ե/բ դիաֆրագմաներ, պատեր, հենապատեր	մ ³	3000,0
8	Ե/բ աստիճաններ	մ ³	300,0
9	Ամրանավորում	տ	3200,0

Էներգառեսուրսների պահանջարկը

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

Անհրաժեշտ էլեկտրական հզորության հաշվարկը:

անհրաժեշտ էլեկտրական հզորության ,կՎտ

1. Աշտարակային կռունկ QTZ125	63
2. Եռակցման սարքեր /12 հատ	60
3. Տարբեր էլեկտրաուժային սարքավորումներ /հատիչներ, դուրեր, սղոցներ և այլն/ 4 կոմպլեկտ	60
4. Էլեկտրաթրթռիչներ	90
5. Շինհրապարակի լուսավորում և կենցաղ	15
6. Շենքերի լուսավորում	15

P տեղ.=303 կՎտ

P հաշվ.= Pտեղ.* Kպահանջ.=303ԿՎտ * 0,8=243 ԿՎտ = 100+150 ԿՎտ

հզորությամբ կոմպլեքսային տրանսֆորմատորային ենթակայան:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{\Sigma} = (n \times N + n_1 \times N_1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 15 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 116 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1248 օր

$W_{\Sigma} = (15 \times 0.016 + 116 \times 0.025) \times 1248 = 3918.72$ մ³/շին. ժամ. կամ 3.35 մ³/օր:

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U_1 = S_1 \times K_1 \times T$, որտեղ՝

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.004 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 600

C₁ – ջրցանի օրական քանակ, 2

$U_1 = 500 \times 0.004 \times 600 \times 2 = 2400$ մ³/շին. ժամ. կամ 4 մ³/օր

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի

$W_{տ} = 3918.72 + 2400 = 6318.72 \text{ մ}^3/\text{շին. ժամ}$:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Ջրամատակարարումը կիրականացվի է գոյություն ունեցող ջրատարից, համաձայն Վեոլիա ջուր ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում), որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

2.7 Ժամանակավոր գույքային շինությունների պահանջարկի հաշվարկ

Բանվորների առավելագույն քանակն ըստ օրացուցային գրաֆիկի կազմում է 116 մարդ:

Բնակելի-քաղաքացիական շինարարության համար սահմանված միջինացված հարաբերակցության հիման վրա աշխատողների քանակն ըստ կատեգորիաների հետևյալն է՝

- բանվորներ 84,5 % կամ 116 մարդ,
- ԻՏԱ – 11% կամ $116 \times 11 : 84,5 = 15$ մարդ,
- ծառայողներ – 3,2% կամ $116 \times 3,2 : 84,5 = 5$ մարդ,
- ԿՍԱ և պահակություն - 1,3 % կամ $116 \times 3,2 : 84,5 = 2$ մարդ:

Վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության շենքերի պահանջարկը որոշվում է ԽՍՀՄ Պետշինի կողմից մշակված հաշվարկային նորմատիվների հիման վրա «Расчетных нормативы для составления проектов организации строительства», Госстрой СССР (ЦНИИОМТ), 1973 г. (табл.51,52):

Գրասենյակների մակերեսները հաշվարկելիս հիմնվում են գծային անգնակազմի 50% վրա (ԻՏԱ, ԿՍԱ պահակ.) Սակայն հաշվի առնելով պահակության համար առանձին կետերի տեղադրումը՝ հաշվարկային հենքը կարելի է ընդունել

$20 \times 0,5 = 10$ մարդ:

Սանիտարակենցաղային նշանակության մակերեսները որոշվում են առավել բազմամարդ հերթափոխի թվից, այսինքն բանվորների 70%, ԻՏԱ, ԿՍԱ պահակության 30%, կամ $116 \times 0,7 + 22 \times 0,3 = 88$ մարդ:

Հանդերձարանների մակերեսների հաշվարկը կատարվում է շինարարության մեջ զբաղվածների ընդհանուր թվից՝ $(116 + 7 = 123$ մարդ):

Հաշվարկային նորմատիվային ցուցանիշները բերված են աղյուսակ 4-ում:

Ժամանակավոր շինություններն ընդունվում են գույքային, միասնականացված սեկցիաներից կոնտեյներային կամ շարժական տիպի:

Ժամանակավոր շենքերի և կառուցվածքների տեսակները ճշտվում են կապալառու և ենթակապալառու կազմակերպությունների կողմից ԱԿՆ մշակման ժամանակ:

Փակ պահեստների, շվաքարանների, բաց հարթակների տեղակայումը որոշվում է գլխավոր կապալառու կազմակերպության կողմից ԱԿՆ մշակման ժամանակ:

Վարչական և սանիտարակենցաղային նշանակության շինություններ

ՀՀ	Անվանումը	Չ.մ.	Նորմատո վ ցուցանիշ ը	Անձնա կազմի թիվը	Հաշվար կային մակերե սը,մ ²
1	Գրասենյակ	մ ²	4,0	10	40,0
2	Բանվորների տաքացման սենյակ	մ ²	0,1	88	8,8
3	Մանրի ընդունման կետ	մ ²	0,45	88	39,6
4	Հագուստի չորացման սենյակ	մ ²	0,2	88	17,6
5	Հանդերձարան	մ ²	0,6	123	73,0
7	Լվացարան	ծորակ/մ ₂	0,05/0,065	88	5/5,7
9	Զուգարան	մ ²	0,07	88	6,16
	Ընդամենը				190.0

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին 20 ամսվա ընթացքում ըստ ժամանակացույցի բանվորների քանակը չի գերազանցում 56 մարդ՝ գումարային մակերեսը կարելի է կրճատել մինչև 95 մ², կամ 4 վագոն 24,3 x 4=97,2 մ²:

Հաջորդ փուլերում կարելի է օգտվել կառուցված սենյակներից:

Փակ պահեստի նվազագույն մակերեսը՝ 20 մ²:

2.8 Արտաքին ջրամատակարարման, ջրահեռացման եվ կոյուղու ցանց

Սույն նախագիծը կատարված է տարածքի տոպոգրաֆիական հանույթի, «ՎԵՈԼԻՍ ՋՈՒԲ» ՓԲԸ-ի կողմից 05.03.20 թ.-ին տրված N ԱՄ 1324 տեխնիկական պայմանի, ինչպես նաև գործող նորմերի և կանոնների համաձայն:

Սառը ջրի սնուցումը կատարվում է Պարոնյան փողոցով անցնող Ø250 մմ տրամագծով պողպատե խողովակով ջրագծից՝ Ø 110 մմ պոլիէթիլենային խողովակով: Դիտահոր նախատեսվում է տեղադրել հողամասի սահմանների մոտ, որի ներսում տեղադրվում է DN 2" տիպի ջրաչափով ջրաչափական հանգույց և գտիչ: Եվ մեկ դիտահոր նախատեսվում է տեղադրել ջրամիացման հանգույցում: Նախագծով նախատեսվում է նաև տեղադրել արտաքին հակահրդեհային հիդրանտ՝ հորի մեջ, շենքի տարածքում:

Կոյուղու միացումը նախատեսվում է կատարել Պարոնյան փողոցով Ø 500 մմ տրամագծով կոյուղագծին, գոյություն ունեցող դիտահորում: Արտաքին կոյուղագծի համար նախատեսվում է պոլիէթիլենային ծալքավոր կոյուղու խողովակ Ø 200 մմ տրամագծով:

Նախագծով նախատեսված է նաև մոտ 61,1 մ երկարությամբ հեղեղատար կոյուղի, որի միացումը նույնպես կատարվում է Պարոնյան փողոցով անցնող Ø 500 մմ տրամագծով խողովակին՝ դիտահորում: Հեղեղատար կոյուղու համար նախատեսված է ընդհանուր թվով 3 դիտահոր, ինչպես նաև պոլիէթիլենային ծալքավոր կոյուղու խողովակ՝ Ø 200 մմ տրամագծով:

Խողովակները փորձարկվում են մոնտաժից հետո:

2.9 Ներքին ջրամատակարարման, ջրահեռացման եվ կոյուղու ցանց

Քաղաք Երևանի Կենտրոն վարչական շրջանի Պարոնյան փող. 15/5,15/7,15/9,15/10, Պարոնյան փող. 15/11 հողամաս, Չորագյուղ թաղամաս 35, Չորագյուղ թաղամաս 1-ին փողոց թիվ 37 հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարման և կենցաղային կոյուղու նախագիծն իրականացված է համաձայն պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, ճարտարապետաշինարարական գծագրերի և ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների՝ ՇՈՒՍ 2.04.01-85:

Իրականացվել է սառը, կենտրոնացված տաք ջրամատակարարման և հրդեհաշիջման նախագիծ:

Ջրի սնուցումն իրականացվում է Պարոնյան փողոցով անցնող ջրատարից, պողպատե խողովակով հասցվում է -23,00 միջուկ նախատեսված ջրամատակարարման պոմպակայանի և ջրի պահուստային լողավազանի հանգույց, այնտեղից տեխնիկական հորանով մուտք է գործում շենք, ապա կանգնակներով բարձրանում և բաշխվում հարկերում: Ամեն հարկում նախատեսված են պահարաններ, որտեղ տեղադրվում են տաք և սառը ջրի բաշխիչ սանրիկների հանգույցներ՝ անհատական ջրաչափերով, որտեղից խողովակները բաշխվում են դեպի բնակարաններ:

Նախատեսված է իրականացնել տաք ջրամատակարարման կենտրոնացված համակարգ: Կաթսայատանը տաք ջրամատակարարման պահանջներին համապատասխան նախատեսվում է տեղադրել ծավալային ջրատաքացուցիչներ և արագային ջերմափոխանակիչներ:

Տների ջրամատակարարման կանգնակները նախատեսված են չժանգոտվող պողպատից, իսկ հարկերում բաշխվող խողովակները՝ մետաղապլաստե: Հրդեհաշիջման համակարգի համար նախատեսված են մետաղական խողովակներ: Յուրաքանչյուր հարկում, ըստ պահանջվող նորմերի, նախատեսված են հակահրդեհային մեկական միաշիթ և երկշիթ պահարաններ:

Ավտոկայանատեղի հրդեհաշիջումը նախատեսված է իրականացնել փոշեհատիկային մոդուլներով, որոնց կազմում առկա է ինքնաշխատ թողարկիչ, որը գործարկվում է մոդուլի տիրույթում 63 °C ջերմաստիճանից:

Վերգետնյա հարկերի կենցաղայի կեղտաջրերը ինքնահոս հավաքվում են և հեռացվում են ներքին ցանցի միջոցով դեպի բակային կոյուղու ցանց: Ստորգետնյա հարկերում տեղակայված բնակարանների կենցաղային կեղտաջրերը, հավաքվելով -5 հարկում՝ կեղտաջրային պոմպի միջոցով հարկադրաբար մղվում են -1 հարկ և ապա հեռացվում դեպի բակային ցանց: Խողովակաշարերը շենքից դուրս են բերվում -1 հարկի առաստաղի տակով:

Այդ կերպ իրականացվում է նաև ստորգետնյա հարկերում ավտոհանգրվանների ջրահեռացումը, որը խառնվելով տանիքից հեռացվող անձրևաջրերի հետ, հեռացվում է բակային հեղեղատար կոյուղու ցանց: Տանիքային անձրևաջրերը ջրընդունիչ ձազարներով՝ հավաքվելով Ø200 տրամաչափի կանգնակներով, հեռացվում են դեպի -1 հարկ:

Կենցաղային և հեղեղատար կոյուղու ցանցերի համար նախատեսված են ՊՎՔ խողովակներ:

Կանգնակները նախատեսված են իրականացնել ուղղահայաց հորանների միջով:

	Պահանջվող ճնշում h (մ)	Ջրամատակարարման վայրկյանային ելք (լ/վ)	Հրդեհաձիջման վայրկյանային ելք (լ/վ)
Ջրամատակարարում	96	6,4	3 x 2.5
Կոյուղի	-	5,0	-
Հեղեղատար	-	5,0	-

2.10 Ջեռուցում, հովացում եւ օդափոխություն

Քաղաք Երևանի Կենտրոն վարչական շրջանի Պարոնյան փող. 15/5,15/7,15/9,15/10, Պարոնյան փող. 15/11 հողամաս, Ձորագյուղ թաղամաս 35, Ձորագյուղ թաղամաս 1-ին փողոց թիվ 37 հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի ջեռուցման, օդափոխության, նախագիծն իրականացված է համաձայն պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի, ճարտարապետաշինարարական գծագրերի և ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների:

Ջեռուցման համար արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանն ընդունված է ձմռանը $t = -19\text{ }^{\circ}\text{C}$: Շենքում սենքերի ջերմաստիճաններն ընդունված են համաձայն նորմերի:

Նախատեսված է իրականացնել կենտրոնացված ջեռուցման համակարգ ամբողջ շենքի համար, ինպես հասարակական, այնպես էլ բնակելի մասի համար:

Կաթսայատունը նախատեսված է տեղակայել $-23,00$ նիշում հատկացված տեխնիկական տարածքում: Որպես ջերմային աղբյուր նախատեսվում է օգտագործել 3 գազային հատակային կաթսաներ, իսկ որպես ջերմակիր հանդիսանում է ջուրը՝ $t_1 = 80\text{ }^{\circ}\text{C}$ և $t_2 = 65\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճաններով:

Կաթսայից մատակարար և հետադարձ խողովակները տեխնիկական հորանով մուտք են գործում շենք, ապա կանգնակներով բարձրանում և բաշխվում հարկերում: Ամեն հարկում նախատեսված են պահարաններ, որտեղ տեղադրվում են ջերմամատակարարման բաշխիչ սանրիկների հանգույցներ՝ անհատական ջերմային հաշվիչներով, որտեղից խողովակները բաշխվում են դեպի բնակարաններ: Տների ջերմամատակարարման կանգնակները նախատեսված են մետաղական, իսկ հարկերում բաշխվող խողովակները՝ մետաղապլաստե: Շենքի միջանցքներում ևս նախատեսվում է իրականացնել ջեռուցում՝ ջեռուցման մարտկոցների միջոցով:

Վերգետնյա բնակելի հատվածում նախատեսված է հովացում մուլտի-սպլիթ համակարգի միջոցով, որի արտաքին բլոկերը նախատեսվում է տեսադրել միջանցքներում նախատեսված հատվածներում:

Շենքի հասարակական տարածքներում նախատեսվում է օդափոխության ներածման-արտածման համակարգեր, որի սարքավորումները նախատեսվում է տեղակայել կաթսայատան հարևանությամբ հատկացված սենքում:

Բնակարաններում նախատեսվում է իրականացնել բնական արտածում սանհանգույցներից և խոհանոցներից: Օդատարները նախատեսվում են ամեն բնակարանի համար առանձին, որոնք նախատեսվում են բարձրացնել մինչև տանիք: Ստորգետնյա հարկերի բնակարանների սանհանգույցների և խոհանոցների արտածման համար նախատեսվում են հավաքող կոլեկտոր- օդատարներ, որոնք հավաքելով -1 հարկի առաստաղով տեղափոխվում են վերգետնյա շինության հատված և բարձրանում են դեպի տանիք: Հորանների վրա նախատեսվում են արտածման օդամուղներ:

Ավտոհանգրվանները նախատեսվում են ջեռուցվող: Օդափոխության համակարգը սնվելով կաթսայատնից ավտոհանգրվաններում պետք է ապահովի 5 °C ջերմաստիճան: Սարքավորումները տեղակայվելու են -23,00 նիշում հատկացված օդափոխության սենյակում:

Անվտանգության պահանջներից ելնելով, շենքի միջանցքներում և ավտոհանգրվաններում նախատեսվում են ծխահեռացման համակարգեր, իսկ վերելակների հորաններում և նախամուտերում (тамбур-шлюз) նախատեսվում են օդային դիմհարներ:

2.11 *Էլ. մատակարարում*

Պարոնյան փող. 15/5,15/7,15/9,15/10, Պարոնյան փող. 15/11 հողամաս, Ձորագյուղ թաղամաս 35, Ձորագյուղ թաղամաս 1-ին փողոց թիվ 37 հասցեներում կառուցվող բազմաբնակարան բազմաֆունկցիոնալ շենքի պահանջված հզորությունն ապահովելու համար անհրաժեշտ է համաձայն նախագծի կառուցել 2*1600/6կՎԱ հզորության ենթակայան: Նոր կառուցվող ենթակայան 6կՎ էլ. մատակարարումն իրականացնել Ս32492111 պատվերով, կառուցվող ենթակայանի 6կՎ Բ/Ս-ի 1 և 2-րդ հատոններից, համաձայն նախագծի վերոգրյալ պատվերի կատարումից հետո: Բազմաբնակարան բազմաֆունկցիոնալ շենքի 0.4կՎ էլ. մատակարարումն իրականացնել նոր կառուցվող ենթակայանի 0.4կՎ վահաններից:

2.12 *Գազամատակարարում*

Քաղաք Երևանի Կենտրոն վարչական շրջանի Պարոնյան փող. 15/5,15/7,15/9,15/10, Պարոնյան փող. 15/11 հողամաս, Ձորագյուղ թաղամաս 35, Ձորագյուղ թաղամաս 1-ին փողոց թիվ 37 հասցեներում հասցեներում կառուցվող բազմաֆունկցիոնալ համալիր գազամատակարարումը P=0.3 ՄՊա ճնշման և Q=258 խմ/ժամ նախատեսվող ծախսով, համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում), հնարավոր է իրականացնել Երևան-1 ԳԲԿ-ն սնող Dպ-700 կողմնատար գազատարի 5.9 կմ-ից:

2.13 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Բնակելի համալիր տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակային և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն ծառազիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատունկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի տարածքով անցնող մոտակա ոռոգման ջրատարին, պայմանագրային հիմունքներով կամ կմատակարարվի մասնագիտացված ընկերության կողմից ավտոմատներով:

Կանաչապատման համար նախատեսված ծառատեսակները և դրանց թվաքանակը՝

- Թխկի կարմիր՝ 6 հատ
- Լաբոռնում անագիրատերև՝ 1 հատ
- Գնդաձև իլենի՝ 18 հատ
- Ասպիրակ՝ 12 հատ
- Ֆորզիցիա՝ 6 հատ
- Խենոմելես՝ 6 հատ
- Ձիակասկ՝ 2 հատ
- Մոսի՝ 2 հատ

2.13.1 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 1704 \text{ մ}^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, K = 2

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$$W_{u.3} = (0.006 \times 858.4) \times 2 \times 175 = \mathbf{1802.64} \text{ մ}^3/\text{տարի}$$

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Կենտրոն վարչական շրջան Պարոնյան փող. 15/5,15/7,15/9,15/10, Պարոնյան փող. 15/11 հողամաս, Ձորագյուղ թաղամաս 35, Ձորագյուղ թաղամաս 1-ին փողոց թիվ 37 հասցեներում:

Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենք-շինությունների հարևանությամբ: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Կառույցի հեռավորությունը հարակից շենք-շինություններից նախատեսվել է գործող նորմատիվային պահանջներին համաձայն:

3.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխ-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Հետազոտվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում:

Համաձայն “ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻՉՑԱՆՆԵՐ” ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներա-երկրաբանական եզրակացության հետազոտվող տարածքին բնորոշ են հետևյալ պայմանները.

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքի սահմաններում ռելիեֆի հիմնական տարրերն են հանդիսանում գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը: Տարածքը ներկայացնում է հրաբխային դելյուվիալ լանջի մի հատված, որը քաղաքաշինական նպատակներով ներկայացված է որես չկառուցապատված և որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատնվում են 1258,0-1275,0 մետրերի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Նախկինում տվյալ տեղամասում մինչև 70 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում, իսկ ավելի խորը տեղակայված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները: Կենտրոն համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

3.2 Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող

տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են խոշորաբեկորային բազալտները, դելյուվիալ-պրոյուվիալ, էյուվիալ-պրոյուվիալ առաջացումները:

Տեղամասը բաղկացած է հետևյալ գրունտերից վերնից-ներքև: Երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ 3 շերտերը:

Շերտ-1 Կավավազներ բաց շագանակագույն, թույլ խոնավ, պինդ թանձրությամբ, խիտ կառուցվածքի, խճի ու խճավազի պարունակությամբ 5- 10%: Հորատված հզորությունը 30.0մ: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (34Ե) II կարգ է

Շերտ-2 Խճային գրունտ, խճավազի պարունակությամբ, կավավազային լցոնի մինչև 15-20% պարունակությամբ: Հորատված հզորությունը 13.4մ: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (396) III կարգ է

Շերտ-3 Խոշորաբեկորային գրունտ կավավազային լցոնով մինչև 10-15% պարունակությամբ: Հորատված հզորությունը 17.5մ: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի (6Ժ) Vp կարգ է

3.3 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» ՀՀՇՆ II-7.01-2011 տվյալների համաձայն:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-3.6	-1,0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում: Էրեբունի կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում 291 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Չյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը – 70 կգ/մ²: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Չյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը _____ միջին _____, մմ												տարեկան
մաքսիմալ օրական												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<u>24</u>	<u>23</u>	<u>32</u>	<u>35</u>	<u>45</u>	<u>23</u>	<u>11</u>	<u>8</u>	<u>12</u>	<u>29</u>	<u>28</u>	<u>21</u>	291
24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ²:

Քամու ակտիվությունը ռեզիոնում ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

ամիս	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, %									Անդորր
	քամու միջին արագությունը, մ/վրկ									
	Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ		
I	4	9	11	14	21	25	12	4	78	
	2,2	2,2	2,2	2,9	2,7	2,3	2,6	2,7		
IV	7	14	8	16	20	16	13	6	50	
	3,1	3,2	2,8	4,0	3,1	3,0	3,8	3,6		
VII	17	28	4	9	17	13	8	4	40	
	5,2	5,7	2,8	2,7	2,4	2,7	2,9	4,3		
X	6	18	10	10	21	20	10	5	70	
	2,9	2,5	2,1	2,5	2,3	2,4	2,9	3,5		

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 2.5 – 2.7 աղյուսակներում:

Արեգակնային ճառագայթում (Երևան)

Աղյուսակ 2.5.

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ ²												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
325	391	637	799	963	955	965	858	673	532	349	293	7740

Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.6.

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
84	109	162	200	267	320	351	332	293	231	144	85	2578

Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.7.

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
11	7	5	2	0,6	0,08	0	0,08	0,1	1	4	10	41

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 2.8 – 2.9 աղյուսակներում:

Կլիմայական բնութագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.8.

Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի	
ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ հինգօրյակի		միջին ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամպլիտուդա	Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (°C) ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝								
ապահովվածություն							միջին ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամպլիտուդա	0	8	10	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ
0.98	0.92	0.98	0.92	-3,8	-28	8,3				70	140	159			
-22	-20	-19	-18				-2,2	1,0	1,8						

Կլիմայական պարամետրերը տարվա տաք ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.9.




Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի	
ապահովվածություն		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական ամսվա հտորա	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	օրական մաքսիմում	գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	հուլիսին միջին արագություններ ից նվազագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
0.95	0.99									
33	34	42	33,3	15,1	45	28	163	51	Հվ	2,4

3.4 Օդային ավազան




Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:




Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օդոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

3.5 Զրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2018 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ₅-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

3.6 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

3.7 Հողային ռեսուրսներ

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 30000 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 10000 մ³ հետլիցք: Ավելցուկային 20000մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

3.8 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ռոզգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (Ժայռային բուսականություն), 2. Տումիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարրերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Գործունեության ենթակա տարածքում տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (*E. repens*), Սեզ սանրանմանը (*E. cristatum*), Սեզ մազակիրը (*E. trichophora*), Սեզ միջինը (*E. intermedia*), Սեզ երկարավունը (*E. elongatum*):

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

3.9 Կենդանական աշխարհ

Երևանի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորազլիկը, օձազլխիկը և երկարատ սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրագդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Կենտրոն վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

3.10 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, տ/տարի
1.	Շինարարական աղբ, այդ թվում քանդման աշխատանքներից առաջացած	IV	9120060001004	1100 մ ³
2.	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	II	9211010013012	0.07
3.	Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ	III	5410030302033	0.2
4.	Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	III	5410020102033	0.3
5.	Բանեցված դողածածկաններ	IV	5750020213004	0.2
6.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	03-0.4

Շինարարական աղբը ամբողջությամ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բազմահարկ բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

4.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

4.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

4.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերապար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

- շին. հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում

4.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով:

4.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
 - գ. Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

4.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

• Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

• Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

• Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

• բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ:

Անբարենպաստ եղանակի դեպքում անվտանգության կարգավորման միջոցառումները կրում են կազմակերպչական-տեխնիկական բնույթ, նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

1. թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք,
2. խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին,
3. անդորրի պայմաններում ժամանակավորապես դադարեցնել աշխատանքը:

Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

4.3.5 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրադրյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

4.3.6 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

➤ խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;

- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

4.3.7 Թափոնների կառավարում

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

4.3.8 Տարածքի բարեկարգում կանաչապատում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուր կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

4.3.9 Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր:

- Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .
- ա/ կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը;
- բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը;
- գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը; շինարարական կոնստրուկցիաների, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Շինարարական կառուցվածքների իրականացման որակի հսկումն անհրաժեշտ է իրականացնել ըստ ՄՆԻՊ 3.03.01-87 «Կրող և պատող կոնստրուկցիաներ » -ի պահանջների և կարգի:

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բազմաֆունկցիոնալ համալիր բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1400 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես` շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում: <ul style="list-style-type: none"> ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից` մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:

<p>Տարածքի բարեկարգում/կանա չապատում</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>Թափոնների կառավարում</p>		<ul style="list-style-type: none"> ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում <p>- կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;</p> <p>- ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար</p> <p>- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափազրույմների կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում</p> <p>- Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,</p> <p>- Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,</p> <p>- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:</p> <p>- Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;</p> <p>- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>- շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ</p>
--	--	---

	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ</p>	<p>առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <ul style="list-style-type: none"> - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը <p>Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <ul style="list-style-type: none"> - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը <p>հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;</p>
--	--	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը	Կապալառու

				կնքելու ընթացքում	
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային	- Աղբամանների տեղադրում	Շինհրապարակ	Արտաքին	Շինարարության	Կապալառու,

աղբի առաջացում	շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ		զննում	ողջ ընթացքում	քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Կառուցապատվող հողամաս Շինհրապարակ	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին զննում Արտաքին զննում	Շինարարության Ավարտին Շինարարության ընթացքում	Կապալառու, Կապալառու,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նալավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում: